

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

15-02-2012թ.

գ.Ծովասար

Կայացավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար համայնքի ղեկավարի 2011թ. հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում են համայնքի ղեկավար Արտաշես Մխիթարյանը, աշխատակազմի քարտուղար Ռուբեն Մուրադյանը, գյուղապետարանի համայնքային ծառայողները, Գեղարքունիաի մարզպետարանի տարագրային վարչության պետի տեղակալ Ավետիք Գասպարյանը:

Ժողովին ներկա են 287 մարդ:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Ա. Մխիթարյանը:

Արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռ. Մուրադյանը:

**Օրակարգում.-** Համայնքի բյուջեի 2011թ. պլան կատարողականը և 2012թ. առաջիկա անելիքները և խնդիրները:

/Ձեկ./ Ա. Մխիթարյան

Զեկուցողը նշեց որ, 2011թ. համայնքի բյուջեն պլանավորված է եղել՝

ա) Վարչական բյուջե, մուտքերի մասով  
որից՝

	Նախատեսվել է	Կատարվել է	Կատարման %
Հողի հարկ	- 8315.3 հազ դրամ	5487.7 հազ դրամ	66.0
Գույքահարկ	- 4800.0 հազ դրամ	5858.2 հազ դրամ	122.0
Գույքահարկ շին.	- 180.0 հազ դրամ	180.0 հազ դրամ	100.0
Տնդական տուրք	- 74.0 հազ դրամ	29.5 հազ դրամ	40.0
Հողի վարձավճար	- 960.0 հազ դրամ	2677.4 հազ դրամ	278.9
Մուտքեր տուգանքներից-	50.0 հազ դրամ	286.5 հազ դրամ	570
Դրոսագիա	- 27974.4 հազ դրամ	27974.4 հազ դրամ	100
<b>Ընդամենը</b>	<b>- 42353.7 հազ դրամ</b>	<b>42493.7 հազ դրամ</b>	<b>100</b>

Զեկուցումից երևում է որ համայնքի բյուջեն կատարվել է 100% -ով, սակայն որոշ հոդվածների այն չի կատարվել է, հատկապես պետք է նշենք հողի հարկը որը պլանավորումից պակաս է կատարվել 2865.6 հազար դրամ կամ թերակատարվել է 34%-ով:

Նախատեսված 42353.7 հազ. դրամ ծախսերի դիմաց, փաստացի ծախսվել է 35223.0 հազ. դրամ:

Տարվա ընթացքում տնտեսվել է 845.5 հազ. դրամ աշխատավարձի ֆոնդից, 150.0 հազ. դրամ էներգետիկ ծառայությունից, 90.2 հազ. դրամ բնական գազի ձեռքբերումից, 40.5 հազ. դրամ կապի ծառայությունից, 163.2 հազ. դրամ գործուղումից, 358.0 հազ. դրամ գրասենյակային նյութերի ձեռք բերումից և այլն:

Հաշվետու տարում տրվել է սոցիալապես անապահով, և ծանր վիճակում ապրող ընդանիքներին 3000.0 հազ. դրամ օգնություն և համայնքի գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգման համար ծախսվել է 4077.0 հազ. դրամ, գարնան գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար ձեռք է բերվել տրակտոր S-150 ԴԶ-87մակնիշի 6230.0 հազ. դրամ-ով, գյուղապետարանի ապարատի համար ձեռք է բերվել ՈՒԱԶ 315-195 մակնիշի ծառայողական ավտոմեքենա 6500.0 հազ դրամ-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման 15 ամյակի կապակցությամբ մարզի լավագույն կուլտուրայի տուն է ճանաչվել մեր համայնքի կուլտուրայի տունը և Գյումրի քաղաքում տեղի ունեցած միջոցառմանը մասնակցել ենք մեր պատվիրակությամբ:

Առ 01- ունվարի 2012թ. դրությամբ վարչական բյուջեի մնացորդը կազմում է 7270.6 հազ. դրամ:

2012թ.-ին նախատեսվել է բյուջեի մուտքային մասով 46855.4 հազ. դրամ, որի կատարման դեպքում պետք է կապիտալ հիմնանորոգում կատարենք 2-րդ փողոցի խմելու ջրագծը և գումարի բավարարման դեպքում ասֆալտապատենք գերեզմանոց տանող ճանապարհը, ցանկապատել գերեզմանոցի մնացած հատվածը և խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին միջնորդել կառավարությանը որպեսզի կառուցվի «Ջրով էնկողմ» թաղամասի կամուրջը՝ քանի որ շուրջ 150 նորաստեղծ ընտանիքներ ստացել են տնամերձ սակայն կամուրջ չլինելու պատճառով չեն կարող բնակարան կառուցել:

Ժողովին ելույթ ունեցավ և համայնքի բնակիչների հարցերին պատասխանեց Գեղարքունիքի մարզպետարանի տարագրային վարչության պետի տեղակալ Ավետիք Գասպարյանը:

Ժողովի նախագահ  
համայնքի ղեկավար՝

Ա. Մխիթարյան

Արձանագրող՝  
աշխատակազմի քարտուղար՝

Ռ. Մուրադյան